

Գ. Մ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՆՈՐ ՊԱՏԱՌԻԿ ՄԵԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՀԱՅՏ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ

Գիտության պատմությանը հայտնի են այնպիսի ստեղծագործություններ, որոնք իրենցով պայմանավորում են գիտության տվյալ բնագավառի հետագա ամբողջ զարգացումը: Հայ բժշկագիտության համար այդպիսի մի ստեղծագործություն է XII դարի տաղանդավոր բժիշկ-բնագետ Մխիթար Հերացու «Ջերմանց մխիթարությունը»՝ տարբեր բնույթի տենդերի ախտածնության, պատճառագիտության և բուժման հարցերին նվիրված մի գործ, որն իր որոշակի հետքն է թողել հայ բժշկագիտության հետագա զարգացման վրա:

XIX դարի 30-ական թվականներին հրատարակվեց Մխիթար Հերացու «Ջերմանց մխիթարությունը» [10]: Եվ հենց սկզբից այն իր վրա սեփական թի բանասերների («Ջերմանց մխիթարությունը» հիմք հանդիսացավ փորձառու բանասեր Դ. Հովնանյանի համար իր ուսումնասիրությունը գրելիս [11]) և թե բժշկագետների ուշադրությունը ու դարձավ նրանց մանրակրկիտ ուսումնասիրության առարկան: Այդ իսկ ժամանակից հայ բժշկության պատմության մասնագետներին մեկ անգամ չէ, որ մտահոգել է այն հարցը, թե Հերացին՝ Կիլիկյան Հայաստանի զարգացման բարձր մակարդակի հասած գիտության այդ տաղանդավոր ներկայացուցիչը, որը բժշկությունից բացի հմուտ էր նաև գիտության այլ ճյուղերի՝ մասնավորապես աստղագիտության մեջ (այդ մասին տեղեկություն կա նրա մեծանուն ժամանակակիցի՝ Ներսես Շնորհալու մոտ, որը Հերացուն տվել է «Բժշկապետ և աստղագետ» տիտղոսը [15]) կարո՞ղ էր, արդյոք, սահմանափակվել միայն մեկ ամբողջական գործի շարադրմամբ:

Եվ չնայած առ այսօր մեզ հայտնի է Հերացու գրչին պատկանող բժշկագիտական միայն մեկ ընդարձակ աշխատություն՝ «Ջերմանց մխիթարությունը», տարբեր ժամանակներում Հերացու ժառանգության հարցերով զբաղված հետազոտողները հայտնել են այն միտքը, որ նա, անշուշտ, բացի դրանից ունեցել է նաև այլ աշխատություններ [4, 6, 12]: Մխիթար Հերացու այլ բժշկագիտական երկերի մասին չկան ուղղակի վկայություններ, բայց բարեբախտաբար կան անուղղակի հիշատակումներ հենց իր՝ Հերացու, ինչպես և հետագա դարերի հայ բժիշկների մոտ: Մասնավորապես «Ջերմանց մխիթարություն»-ի գլխում, որտեղ քննարկվում են վերին շնչուղիների կատարի հետ կապված միօրյա ջերմերի ախտածնության և բուժման հարցերը, Հերացին գրում է. «...որ զզուգամն և զնուզլան յիշեցաք յայլ գիրք. և աստ գրենք զիւր ստածումն՝ որ է այս» («Ջերմանց մխիթարութիւն», էջ 291): Նույն աշխատության մեկ ուրիշ 12 գլխում, որը նվիրված է երկօրյա և եռօրյա տենդերին գրում է. «Ապա թէ զուսն հիւանդութեան ի յաղիքն լինի, կակուղ հուկնալով զբնութիւնն լոյծ, գերդ որ ի յերկրորդ ի գիրքն յիշեցաք» (նույն տեղում,

էջ 108): «Ջերմանց մխիթարության» և գլխում Հերացին հիշեցնում է մեկ ուրիշ աշխատության՝ «Ախրաբադինի» մասին. «Ապա թէ յերեսն կամ ի յոտսն փութս անկանի, տուր զդեղն նախկին, զոր յակրայքաղինն կայ գրած...» (նույն տեղում, էջ 84): Հետաքրքիր է XV դարի հայ մեծանուն բժիշկ Ամիր-դովլաթ Ամասիացու վկայությունը: Իր «Անգիտաց անպետ»-ում հիշատակելով իրենից առաջ ապրած մի շարք հայ բժիշկների անունները, որոնց թվում, հենց սկզբից, Հերացուն՝ Ամիրդովլաթը վկայում է, որ այդ «առաջին բժշկապետքն մեր...», «...շատ գրեանք շիներ և ին վասն դեղերուն զօրութեանն և ազատութեանն» [5]:

Բացի «Ջերմանց մխիթարություն»-ից Հերացու հեղինակած գրչին պատկանող այլ երկերի առկայության մասին ավելի ստույգ վկայություններ են XVII դարի բժիշկ Ասար Սեբաստացու շնորհիվ մեզ հասած Հերացու անհայտ ստեղծագործությունների առանձին հատվածները: Մասնավորապես նրա միջնորդությամբ է, որ այժմ մեր սեփականությունն է դարձել Մխիթար Հերացու աչքի հիվանդություններին նվիրված անհայտ գործից մի ամբողջ պատուհիկ, որը Ասար Սեբաստացին ավելացրել է Աբուսայդիի «Մարդակազմության» իր կողմից խմբագրված օրինակի «Վասն շինուածոյ և յօրինուածոյ աշացն» գլխում [1, 13, 16, 18]: Այդ պատառիկը Մխիթարին պատկանելը անառարկելի է, քանի որ նրա մեջ պահպանվել են հեղինակային յայտպիսի վկայություններ—«Ասացեալ է Մեծն Մխիթար, թէ ամենայն բժիշկ, որ աշաց կամենայ ծառայել, պիտի որ զկազմութիւն աշացն կարդայ», «Արդ, կամ եղև ինձ Մխիթարայ, որ յիշեմ զաշաց կազմութիւնն կարճառոտ և ասեմ» [2]:

Վերոհիշյալից բացի Մխիթար Հերացուն պատկանող երկու այլ հատվածներ առկա են Ասար Սեբաստացու ներքին ախտաբանությանը նվիրված «Գիրք բժշկական արհեստի» բժշկարանում: Այդ պատառիկներից մեկը դեռևս XIX դարի վերջին նկատել է Ղ. Հովնանյանը և զետեղել իր «Հետազոտութիւնք նախնեաց ռամկօրենի վրայ» աշխատության մեջ: Ահա շատ ուշագրավ այդ հատվածը. «...Վասն այն ցաւոյն, որ Զերեսօքն լինի մարդն, և իր նշանն այն է, որ քիթն կալվի, հոտ չառնէ, և բժիշկինն յայսօր զուգում կոչեն, որ է նուզլայ, որ իջանէ ի գլխոյն և գայ ընդ քիթն, և պատճառն այն է՝ որ մարդն քրտնի և քրտնած ցուրտ առնու: Յայնժամ քիթն կծի և քորի և փնչա վատ, և ընդ քիթն ջուր գայ: Երբ այս նշանքս լինի՝ այսօր Զերեսօքն կոչեն: Այլ ես Մխիթարս յիշեմ կարճառոտ՝ եթէ ուստի լինի երեսօքն և կամ նուզլան: Յորժամ լնու ի գլուխն գիշութեամբ և յուղարկէ ի խնծորս ա-ի գանկիկն, նա զփողքն խոշորէ, և այն նուզլայ կոչի, ապա թէ ի քիթն ուղարկէ՝ այն Զերեսօքն կոչի: Եւ այն, որ ի տաք պատճառանաց լինի և այն որ իջանէ լինի և տաք, պարտ է օծանել վարդի ձիթով և որ նման է այլով: Ապա թէ ի հով պատճառանաց լինի, այն որ իջանէ՝ հաստ լինի և հով. պարտ է տաք ծխել սամթի ձիթով և որ նման է, օգտէ: Առ կորեկ և թեփ խառն և տաքցրու քաջ ի շաքրեռացն և լից ի կտավ քիսայ և ի գլուխն պլօրէ, որ տաքցնէ. և արա փոխ առ փոխ՝ աղէկ քրտնի. որ կտրէ զիջուածքն որ ի գլուխն իջնէ. շատ գէշ պատճառնի այնէ: Եւ երբ ի կուրծքն իջնէ, նշանն այն է, որ ձայնն կարի, Եւ որչափ ճար կայ՝ ջանայ որ ի կուրծքն չիջնու: Եւ առ սոնիճ, աղնձէ և ի վուշ կտաւ ծրարէ, և ճիճի ի ներք հոտոտայ, և շատ օգտէ իւր, և ի մտոյ և ի գլխոյ պատրաստ կալ...» [14]:

ինչպես տեսնում ենք այս հատվածում նկարագրված է վերին շնչական ուղիների կատարը, որը Հերացին անվանում է «նուզլայ» (հարբուխ—*coryza*) կամ զուգում: Փորձառու մահճաբույժը հանգամանորեն թվարկելով առաջին հայացքից անվտանգ թվացող այս հիվանդության գլխավոր ախտանիշներն ու բուժման միջոցները, բժիշկների ուշադրությունը հրավիրում է հիվանդության այն հնարավոր բարդության վրա, որի բուժումը արդեն իսկ մեծ դժվարությունների հետ է կապված. «Եւ որչափ ճար կայ՝ ջանայ որ ի կուրծքն շիջնու»: Խոսքը վերին շնչուղիների կատարից հետո առաջացած թոքաբորբի մասին է, մի ախտահարում, որի բուժումը բժիշկներից այսօր էլ մեծ ջանքեր է պահանջում: Մեր կարծիքով շնչական ուղիների ախտահարմանը նվիրված այս ամբողջ հատվածը Ասար Սեբաստացին վերցրել է այն նույն գրքից (հավանաբար ընդհանուր ախտաբանությանը նվիրված), որի մասին Մխիթար Հերացին հիշատակում է «Ջերմանց մխիթարության» ժե գլխում: Այդ եղրահանգամանը մեզ բերում է այն փաստը, որ երկու դեպքում էլ խոսքը նույն հիվանդության՝ «զուգումի» և «նուզլայի» մասին է (մի դեպքում «զզուգամն և զնուզլան յիշեցաք յայլ գիրք»՝ Մ. Հերացու «Ջերմանց մխիթարության» ժե գլխում, մյուս դեպքում «Այլ ես Մխիթարս յիշեմ կարճառօտ՝ եթէ ուստից լինի երեսօքն եւ կամ նուզլան»՝ Ասար Սեբաստացու «Գիրք բժշկական արհեստի» գրքում): Հերացուց փոխառած այդ հատվածում ուշագրավ է հիվանդության պատճառագիտության Ասար Սեբաստացու հետևյալ ձևակերպումը. «Յորժամ խիստ և շատ հիւանդութիւնք լինի, պատճառն այն է, որ օդն եղծած լինի եւ բորբաժ, եւ հետ շնչոյն մտանէ եւ փոխէ զառողջ բնութիւնն: Եւ զայլ ստածումն գտանես ի գիրս Մխիթարայ բժշկին»: Սեբաստացի բժիշկը կարողացել է ըմբռնել Հերացի բժշկապետի կողմից զարգացված «բորբոսային» ինֆեկցիոն հանճարեղ թեորիան և հիվանդությունների խիստ տարածվածությունը բացատրել վարակված օդով: Մխիթար Հերացու «բորբոսային» թեորիայի վերաբերյալ, սկսած XIX դարի վերջերից գիտնականները տարբեր կարծիքներ են հայտնել ու ի վերջո հանգել այն եղրակացության, որ Հերացին «բորբոսային» տերմինի տակ դրել է ինֆեկցիայի-վարակի գաղափարը [7, 17, 19]:

Ի դեպ, Ասարի «Եւ զայլ ստածումն գտանես ի գիրս Մխիթարայ բժշկին» արտահայտության մեջ, արդյոք, խոսքը Հերացու «Ջերմանց մխիթարության» մասին է (որտեղ նա զարգացրել է «բորբոսի»-վարակի գաղափարը), թէ՞ նրա գրչին պատկանող մեկ այլ աշխատության՝ առայժմ դժվար է ասել:

Ասար Սեբաստացու «Գիրք բժշկական արհեստի» գործում Հերացու գրչին պատկանող վերահիշյալ հատվածը բացակայում է Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող նույն բժշկարանի չորս գրչագիր օրինակներում էլ (ձեռ. №№ 413, 464, 7749, 9837): Թերևս դա բացատրվում է նրանով, որ այդ չորս ընդօրինակություններն էլ ունեն պակաս գլուխներ թե սկզբից, և թե վերջից:

Այսուհանդերձ, այս չորս գրչագիր օրինակներից ավելի լիարժեք է Մատենադարանի № 7749 ձեռագիր-բժշկարանը: Ասար Սեբաստացու «Գիրք բժշկական արհեստի» կոչվող այդ բժշկարանում է հենց գտնվում Մխիթար Հերացու հեղինակած անհայտ գործի խնդրո առարկա պատառիկը, որը նվիրված է աճուկա-փոշտային աղեթափություններին, ամորձիների տարբեր տեսակի ախտահարումներին և նրանց բուժմանը: Ի դեպ, այդ պատառիկը

գրանցված է եղել Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագիր-բժշկարան-ների Ս. Լալաֆարյանի և Վ. Խեչումյանի կողմից պատրաստված մեքենագիր ցուցակի մեջ: Ս. Լալաֆարյանը այս պատառիկին անդրադարձել է նաև Մխիթար Հերացու 850-ամյա հոբելյանին նվիրված գիտական նստաշրջանում կարդացած Հերացու ժառանգության մասին իր զեկուցման մեջ:

Ահա այդ արժեքավոր պատառիկը.

«Վասն փշտանկի, որ է ձվանքն: Եւ եւն ցեղ ու ցեղ, զոր չէ յիշած, բայց աս Մխիթարս յիշեմ կարճառո: Եւ ի յառաջն զցայլանգն յիշեմ. Եւ ինքն այն է, որ իբրև զցայլուցն հատանի, կամ արձկնայ և կամ հերձի, իջանի ի յաղեցն մինչև ի ցայլսն: Ապա թէ քիչ է հատել, նա ողջանայ տտիպ և չորային դեղերովն և կապելովն, որ բարձ ունի, ապա թէ շատ է հատածն, նա յաջի խաբելովն և կապելովն և պատրաստութեամբ:

Վասն որ կոչի աղիցանգ. Եւ ինքն այն է, շատաբանութիւնք (ձեռ. № 413 — շատ բանուի) կամ հերձի և վաթի աղիքն և իջանի ի վայր՝ մինչև ի ձուգն. և այս ցեղս առանց կտրելոյ և ձեռաց բանի ողջանայ:

Վասն որ ջրանգ կոչի: Եւ ինքն այն է, որ շատ ջուր հաւաքի և լնու ձուգն: Եւ գիտացիր, որ ըզցայլանգն և զաղեցանքն կարենք զաղիքն ի վեր հաւաքել և արգելել, բայց ջրանգն չունինք կարողութիւն զջուրն ի վեր հաւաքել և արգելել. և ողջանայ այս ցաւս կտրելով և ձեռաց բանով, որ ջառահի է.

Վասն որ հուզմունգ կոչի: Եւ ինքն այն է, որ ի ձուգն փուք անկանի, մաւնաւանդ տղայոց. և ողջանայ այս ցաւս յորժամ չորային դեղերովն օծես:

Վասն որ կոչի թթիանգ: Եւ ինքն այն է, որ երակքն և ներսէ ձուկքն աճեն լի սև արեամբ. և ողջանայ այս ցաւս կտրելով և ձեռաց գործով, որ ճէռահն է:

Վասն որ կոչի մարմնանգ: Ինքն այն է, որ ձուոց մարմինն հաստանայ շատ և քարանայ զերդ սպօնդ քար, և այս անբժշկելի է:

Վասն որ կոչի ռսկրանգ: Ինքն այն է, որ աճէ ձուքն այտոց՝ պինդ և բոլոր, ի ներս գիշութիւն լինի զերդ զխմոր, և զդրուց պինտ զերդ ոսկոր. նոյնպէս և այս ցաւուս անբժշկելի ասացին:

Եւ այս են ձուանքնին, զոր յիշեցաք» [9]:

Հատվածի հենց սկզբում Մխիթար Հերացու կողմից օգտագործված «Վասն փշտանկի, որ է ձվանքն: Եւ եւն ցեղ ու ցեղ, զոր չէ յիշած» արտահայտությունն արդեն իսկ առիթ է տալիս կարծելու, որ մինչ Հերացին հայերեն բժշկարաններում այդ ախտահարման մասին հիշատակումներ չեն եղել: Եվ փաստորեն հայ բժիշկներից Հերացին առաջինն է, որ նկարագրում է ձուգվածքների տարբեր տեսակները, գիտական մեկնաբանումներ տալով դրանց ախտածնության, պատճառագիտության և բուժման հարցերին:

Հերացուց հետո էլ հայերեն բժշկարաններում մենք չենք հանդիպում աղեթափությունների մասին այդօրինակ հանգամանալի ուսումնասիրության: Եիշտ է՝ Ամիրդովյաթ Ամասիացին «Օգուտ բժշկության» գործի «Այն քամին որ ֆաթիս ասեն կամ յաղիքն լինայ կամ ի ձվերն» գլխում անդրադառնում է այդ հիվանդությանը, սակայն իր գիտական մեկնաբանության մակարդակով այն մեծապես զիջում է Հերացու ուսումնասիրությանը: Թերևս դա է պատճառը, որ Ասար Սեբաստացին հատկապես այդ գլուխն է վերցրել Հերացու անհայտ գործից:

Աղեթափության մի ձևին Հերացին անվանում է «փշտանկ», երբ աղին որովայնի խոռոչից իջնում է մինչև ցայլքը (Hernia inguinalis) և եթե ձող-

վածքային խողովակը կարճ է ու աղին քիչ է իջնում դեպի կոնքի խոռոչ, ըստ Հերացու, դա վտանգավոր չէ և կարելի է բուժել տախպ ու շորային դեղերով: Ուշագրավ է, որ այդ դեպքում Հերացին աղին վեր բարձրացնելու և այդ վիճակում պահելու համար հիվանդներին խորհուրդ է տալիս օգտագործել հատուկ կապեր (բանդաժներ)՝ բուժման մի ձև, որ այսօր էլ սեղմվելու վտանգ չունեցող ճողվածքների դեպքում լայնորեն կիրառվում է վիրաբուժական պրակտիկայում:

Մխիթար Հերացուն ծանոթ է նաև աճուկա-փոշտային ճողվածքը, որին նա անվանում է «աղեցանգ» (Hernia scrotalis): Ընդամենը մեկ երկու նախադասությամբ նրան հաջողվում է ճշգրիտ նկարագրել աղեթափության այս տեսակի կլինիկական ճշգրիտ պատկերը. «Եւ ինքն այն է, որ շատ բանուի կամ հերձի և վաթի աղիքն և իջանի ի վայր մինչև ի ձուգն»:

Աղեթափության այս տեսակը Հերացին նույնպես խորհուրդ է տալիս բուժել կոնսերվատիվ եղանակով, առանց վիրաբուժական միջամտության. («...և այս ցեղս առանց կտրելու և ձեռաց բանի ողջանայ»):

Բացի աղեթափություններից, այս պատառիկում Մխիթար Հերացին անդրադառնում է նաև ամորձիների տարբեր հիվանդություններին: Մասնավորապես դրանցից մեկը՝ ամորձու ջրգողությունը (Hydrocele) նա, ի տարբերություն աղեթափությունների, խորհուրդ է տալիս բուժել միայն վիրաբուժական միջամտությամբ, պատճառաբանելով այսպես. «Ջրանքն շունինք կարողութիւն դշուրն ի վեր հաւաքել և արգելել և ողջանայ այս ցաւս կտրելով և ձեռաց բանով, որ ջառահի է»: Բավական բարդ վիրաբուժական այս միջամտությունը անպայման կատարվել է հմուտ վիրաբույժների կողմից, որոնց Հերացին անվանում է «ջառահի» (ջառահ, ձեռահ-արաբերեն՝ վիրաբույժ): Այդպիսի հմուտ վիրաբույժներ և լավագույն վիրաբուժական ավանդույթներ իսկապես եղել են միջնադարյան Հայաստանում: Այդ է հավաստում այս պատառիկում Հերացու կողմից առաջարկվող ինչպես վերը հիշատակված, այնպես էլ մի քանի ուրիշ բարդ վիրաբուժական միջամտությունների փաստը, ինչպես նաև այդ մասին վկայությունները՝ հետագա դարերի հայերեն բժշկաբաններում [8]:

«Վասն որ հողմունք կոչի» ախտահարումը, ըստ Հերացու հիմնականում լինում է մանկական հասակում և դրա բուժումը, ի տարբերություն ամորձու ջրգողության, պետք է կատարվի կոնսերվատիվ եղանակով. «ողջանայ այս ցաւս յորժամ շորային դեղերովն օժես»:

Ամորձիների տարբեր բնույթի ախտահարումների շարքում Հերացու ուշագրությունից չեն վրիպել նաև այդ օրգանի ուռուցքային փոփոխությունները, որոնց նա պատկերավոր ձևով անվանել է «մարմնանգ» և «ոսկրանգ»: Նա նկատել է, որ այս ծանր ախտահարման ժամանակ ամորձու փափուկ խմորանման հյուսվածքը այնպիսի փոփոխությունների է ենթարկվում, որ շոշափելիս ոսկորի տպավորություն է թողնում. («...աճէ ձուքն այտոց պինդ և բոլոր և ի ներս զիջութիւն լինի դերդ խմոր և դրուց պինդ զերդ ոսկոր») և որ այն, ի տարբերություն այդ օրգանի այլ ախտահարումների, անբուժելի է:

Անդրադառնալով Ասար Սեբաստացու միջոցով մեզ հասած Հերացու անհայտ գործի բժշկագիտական ուրույն արժեքին, նշենք նաև զուտ բանասիրական մի հանգամանք ևս: Ասար Սեբաստացու միջոցով մեզ հասած այս պատառիկում Հերացին գոյություն իրավունք է տվել «փշտանգ», «աղեցանգ»,

«չրանգ», «մարմնանգ», «ոսկրանգ» հայերեն բժշկական տերմիններին, որոնք հիմնականում կազմվել են զրաբարյան «անգ» մասնիկի օգնությամբ (որն, ինչպես հայտնի է, արտահայտում է «իջեցում», «անկում» իմաստը): Ի դեպ, սա Հերացու կողմից տերմինակազմության եղակի փաստը չէ: Աբուսայիդի «Մարդակազմության» Հերացուն պատկանող արդեն իսկ հիշատակված պատահիկում, մեծ բժշկապետի կողմից օգտագործվում են աչքի թաղանթների հայերեն անատոմիական տերմիններ («պնդենի», «սառնենի», «սարդոստենի», «ձվի սպիտակուցենի»), որոնց մի մասը հաստատապես մտել են աչքի կազմության արդի անատոմիական տերմինաբանության մեջ [3]:

Նշենք նաև հետագա ուսումնասիրության համար կարևորություն ունեցող մի ոչ երկրորդական հանգամանք: Մխիթար Հերացու գրչին պատկանող վերոհիշյալ 3 պատառիկներում առկա է մի լեզվական ընդհանրություն՝ այդ 3 հատվածներն էլ սկսվում են Հերացու հեղինակային ինքնությունը հաստատող հատուկ ռեզիմ. «Բայց ես Մխիթարս յիշեմ կարճառօտ...», «Արդ կամ եղև ինձ Մխիթարայ, որ յիշեմ զաչաց կազմութիւնն կարճառօտ...», «Այլ ես Մխիթարս յիշեմ կարճառօտ՝ եթէ ուստից լինի երեսօքն եւ կամ նուզլան...»:

Ասար Սեբաստացու միջոցով մեզ հասած Մխիթար Հերացու անհայտ գործերի այս պատառիկները մեկ անգամ ևս գալիս են հաստատելու Մխիթար Հերացու ներքին ախտաբանությանը նվիրված անհայտ աշխատության գոյության հավանականության փաստը, մի աշխատություն, որն իր ամբողջությամբ կամ չի հասել մեզ, կամ էլ պահպանվել է առանց հեղինակի հիշատակության աշխարհում մեկ սփռված հայերեն որևէ ձեռագրի մեջ և որի հայտնաբերումը հնարավորություն կընձեռի մի նոր տեսանկյունով գնահատելու մեծ բժշկապետի բժշկագիտական ժառանգությունը:

Մաշտոցի անվան

Ֆին Ժեռագրերի ինստիտուտ,

Մատենադարան

Ստացված է 2 V 1976 թ..

Д. М. КАРАПЕТЯН

НОВЫЙ ФРАГМЕНТ ИЗ НЕИЗВЕСТНОГО ТРУДА МХИТАРА ГЕРАЦИ

Резюме

В статье представлен новый фрагмент из недошедшего до нас труда классика средневековой армянской медицины Мхитара Гераци, озаглавленный «О пахово-мошоночных грыжах или о (болезнях) яичек» и посвященный вопросам патогенеза, клинической симптоматиологии и лечения (как консервативного, так и, особенно, хирургического) вышеуказанных заболеваний.

Изучение этого отрывка с точки зрения истории средневековой армянской медицины выявило всю глубину познаний и высокий научный уровень великого «бжшкapeda» в одном из сложнейших вопросов клинической медицины.

В статье одновременно дается оценка роли как редактора и компилятора средневекового врача XVII века Асара Себастиа, включившего вышеназванный фрагмент Мхитара Гераци в свой труд «Книга врачебного искусства» и тем самым сохранившего его для последующих поколений.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբուլհալիլ. Յաղագս կազմութեան մարդուն, աշխատասիրությամբ Ս. Վարդանյանի, Երևան, 1974, էջ 17—24:
2. Նույն տեղում, էջ 178:
3. Նույն տեղում, էջ 45:
4. Ալիշան Ղ., Շնորհալի եւ պարագայ իւր Վենետիկ, 1873:
5. Ամիրզոյլաթ Ամասիացի, Անգիտաց անպէտ: Վիեննա, 1927, էջ 2:
6. Բորզոմյան Վ., Հայ բժշկական ձեռագիրք Ս. Ղազարու վանքին, Բաղմավազ, 1923, էջ 42—43:
7. Կոռյան Ա., Բժշկագիտութիւնը Հայաստանում XI—XIV դարերում: Երևան, 1968, էջ 290—294:
8. Նույն տեղում, էջ 263—283:
9. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 7749, էջ 59բ:
ձեռ. № 413, էջ 167բ—168ա:
ձեռ. № 9837, էջ 305բ—306ա:
10. Մխիթարայ Հերացու, Զերմանց մխիթարութիւն: Վենետիկ, 1832:
11. Հովնանյան Ղ., Հետազոտութիւնք նախնեաց ուսմկօրենի վրայ, մասն Ա: Վիեննա, 1897, էջ 67—97:
12. Նույն տեղում, էջ 87—91:
13. Նույն տեղում, մասն Բ, էջ 502—504:
14. Նույն տեղում, էջ 89—90:
15. Ներսես Շնորհալի, Բանք շախա: Վենետիկ, 1928, էջ 299:
16. Мелик-Мусьян Б. Банбер (Вестник Матенадарана), 1950, 2, стр. 30—31 (Ереван).
17. Мхитар Гераци Утешение при лихорадках. Ереван, 1968, стр. 34.
18. Оганесян Л. История медицины в Армении, ч. 11. Ереван, 1946, стр. 61.
19. Там же, стр. 95.